ՀԱՄԱԶԳԱՅԻՆ
ՀԱՅ ԿՐԹԱԿԱՆ ԵՎ
ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ
ՄԻՈՒԹՅՈՒՆ

Խ. ԱԲՈՎՅԱՆԻ ԱՆՎԱՆ
ՀԱՅԿԱԿԱՆ ՊԵՏԱԿԱՆ
ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ
ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

ՀԱՅ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ-ՔԱՂԱՔԱԿԱՆ ՄԻՏՔԸ

19-ՐԴ ԴԱՐԻ ՎԵՐՋԻՆ
 ԵՒ 20-ՐԴ ԴԱՐԻ ԱՌԱՋԻՆ ԿԵՍԻՆ.

պատմություն և արդիականություն

ԳԻՏԱԺՈՂՈՎԻ ՆՅՈՒԹԵՐԻ ԺՈՂՈՎԱԾՈՒ

Ռուբինա Փիրումեան /ԱՄՆ/
Բանասիրական գիտութիւնների դոկտոր

ՀԱՅ ՔԱՂԱՔԱԿԱՆ ՄՏՔԻ ՎԵՐՋԻՆ ԹՌԻՉՔԸ՝ ԾԻԳ ԱԶԳԱՅԻՆԻՑ ՊԵՏԱԿԱՆ ՄՏԱԾՈՂՈՒԹԵԱՆ ԱՆՑՆԵԼՈՒ, 1918-1920թթ.*

19-րդ դարի Հայոց Զարթօնքի արդիւնքում հայութիւնը կրօնական համայնքից ազգայինի փոխուեց, ներշնչուեց ազգային գիտակցութեամբ, որ պիտի տանէր ազատատենչութեան՝ դառնալու մեկնակէտը քաղաքական նպատակների, Հայկական Հարցի ու պահանջատիրութեան ձեւաւորան: Շարժումը զանազան ուղղութիւններով եւ ազդեցութիւններով յառաջացաւ, դարձաւ գաղափարախօսութիւն, դարձաւ գործ, դարձաւ պայքար՝ թէ՛ խաղաղ (քաղաքական / դիւանագիտական) եւ թէ՛ զինեալ (ինքնապաշտպանական / ֆիդայական):

Ընդհանրացման գնով կարելի է ասել, որ այս ճանապարհին ռուսահայ մտաւորականութիւնը իր մաքառումների մէջ յոյսը անջիղ ու անտարբեր հոգեւորականութեան եւ բուր-

* Այս յօդուածը համառօտ տարբերակն է գիտաժողովի առիթով պատրաստուած աւելի ծաւալուն աշխատութեան, որը յղկուելուց յետոյ պիտի տեղադրուի հեղինակի կայքէջում:

ժուազիայի օգնութեան վրայ էր դրել: Իսկ թրքահայ մտաւորականութիւնը ուժը կենտրոնացրել էր մշակութային վերելքի ապահովման, կրթութեան եւ լուսաւորութեան վրայ: Այս երկու ճամբաները Միքայէլ Նալբանդեանի ու Ռաֆֆու գովերգած «հայրենի հողի» հարցին լուծում պիտի բերէի՞ն: Հազիւ թէ:

Բեռլինի վեհաժողովի (1878) այսպէս կոչուած հայանպաստ որոշումները կարճատեւ ոգեւորութեան առիթ դարձան: Սակայն, որոշումները գործադրութեան չանցած, դէմ առան Սուլթան Համիդի հակազդեցութիւններին՝ բռնութիւն, հալածանք ու կոտորած: Ծածուկ տարուում էր Թրքահայաստանը հայերից դատարկելու, Արեւելեան Հարցից ազատուելու օսմանեան քաղաքականութիւնը: Բայց, հակառակ ազդեցութեամբ այդ քաղաքականութիւնը պիտի խթանէր Խրիմեան Հայրիկի «երկաթէ շերեփի» գաղափարի ընկալումն ու իւրացումը: Ինքնապաշտպանութիւնն ու հայրենիքի ազատագրումը միայն կարելի էր զէնքի ուժով ապահովել: Կրթամշակութային զարգացումը բաւարար չէր: Ճամբան զինեալ պայքարն էր, մինչեւ ապստամբութիւն, յեղափոխութիւն: Իսկ դրա օրինակները տալիս էին Օսմանեան կայսրութեան բռնապետական լծից ազատուելու պայքարի մէջ մտած եւ յաջողած եւրոպական փոքր ժողովուրդները:

Բայց, ինչո՞ւ միայն Թրքահայաստանի եւ ո՛չ Ռուսահայաստանի ազատագրում: Նախ, որովհետեւ սահմանափակ ուժերով կարելի չէր երկու ճակատի վրայ աշխատել. բացի այդ, ցարական մենատիրութիւնը ռուսահայութեանը տուել էր քաղաքական-մշակութային-կրթական որոշ ազատութիւններ եւ անհատական զարգացման կարելիութիւն: Յեղաշրջման անհրաժեշտութիւն չկար եւ, ի տարբերութիւն թրքահայութեան, նրա գլխին գոնէ ֆիզիքական բնաջնջումի վտանգը կախուած չէր: Հայը Ռուսահայաստանում ապրում էր քաղաքականապէս ռուսացած: Ազատագրման մղումը եւ յեղափոխութեան մէջ մասնակցութիւնը յետոյ պիտի առաջանար, նախ՝ ինքնապաշտպանութեան նպատակով (ՀՅԴ Ընդհ. ժողով, 1904), յետոյ՝ անմիջական մասնակցութեամբ (ՀՅԴաշ-

նակցութիւն, «Նախագիծ Կովկասեան Գործունէութեան», 1905)[1], երբ Ռուսաստանը յեղափոխական շարժումների բեմ էր դարձել:

Կովկասեան նախագիծը անկիւնադարձ էր: Առաջին անգամ դրւում էր Անդրկովկասում ռուսահայութեան քաղաքական միաւոր դառնալու հարցը՝ դաշնակցային կապով Ռուսաստանին կապուած: Նոյն ձեւաչափով՝ Թրքահայաստանը Օսմանեան պետութեան կապուած (ՀՅԴ Ընդհ. ժողով 1907): Անկախ պետականութեան մասին դեռ խօսք չկար եւ գուցէ ո՛չ էլ պատկերացում: Ի հարկէ, հայ հարուստները, ամիրա, առեւտրական, ազնուական, բուրժուա, հեռու մնացին գործից, զլացան անհրաժեշտ նիւթականը ապահովել, առանց որի գործը, «Սուրբ Գործ»ը զրկուեց անհրաժեշտ յենարանից:

Ճամբան գծուած էր, լայն գործունէութիւն ծաւալուած, երբ պայթեց Առաջին աշխարհամարտը, որի շղարշի տակ՝ Հայոց Ցեղասպանութիւնը: Արդիւնքը վիթխարի բեկում էր հայ ժողովրդի պատմութեան ընթացքի, ուրեմն, եւ զարգացման յարացոյցի մէջ:

Թէ պատմութիւնը ի՞նչ ընթացք կունենար, եթէ շարունակուէր նախապատերազմեան գործընթացը: Հայոց ազատագրական պայքարը կը կարողանա՞ր Հայաստանի անկախութեան հասնել:

---

1 ՀՅԴաշնակցութիւն, «Նախագիծ Կովկասեան Գործունէութեան» (ժընեւ, Տպարան ՀՅԴաշնակցութեան, 1906, երկրորդ հրատարակութիւն): Կարելի է կարդալ առցանց՝ https://www.arfd.am/library/44368/?fbclid=IwAR3WZcem__v8thVZ-jhwfODMJq-qj3j8qysBAN8AB-4M4khAk65cX05nMjEE

Տես նաեւ Միքայէլ Վարանդեան, «Հայրենիքի գաղափարը» (ժընեւ, Տպարան ՀՅԴաշնակցութեան, 1904), ուր նկարագրւում է ցարիզմի ռուսականացումն ու կովկասահայութեան կամաւոր ուծացումը: Աշխատութիւնը կարծես նախերգանքն է Կովկասեան Նախագծի: Կարելի է կարդալ առցանց՝ https://haygirk.nla.am/upload/1512-1940/1901-1940/hayreniqigagh_1904.pdf

Մասնակցութիւն պատերազմին, ռազմական փորձի ձեռքբերում

Հակառակ Սահմանադրական յեղաշրջումից առաջ սկսուած ՀՅԴ-երիտթուրք համագործակցութեան եւ խոստացուած հայանպաստ բարենորոգումների, երիտթուրք իշխանութիւնները հետզհետէ փոխեցին ոչ իսլամ ազգային փոքրամասնութիւնների իրենց քաղաքականութիւնը եւ ի գործ դրեցին երկրի շեշտուած օսմանականացումը, որին պիտի յաջորդէր թրքացում՝ «Թուրքիան թուրքերի համար միայն» կարգախօսով: Թրքահայութեան գոյակցութիւնը արդէն գրգռուած թրքութեան մէջ խիստ վտանգաւոր էր: Օսմանեան կայսրութիւնը Գերմանիոյ կողքին պատերազմի մէջ էր մտել ընդդէմ դաշնակիցների: Ձնջուել էր բարենորոգումների ծրագիրը: Երկիրը կտրուել էր դրսի աշխարհից եւ առիթ ընծայել կառավարութեանը իրագործելու կայսրութեան հայաթափումը՝ տեղահանութիւն, կոտորած, երեխաների բռնի տեղահանում եւ թրքացում, որ երեք տասնամեակ յետոյ ցեղասպանութիւն պիտի որակուէր:

Թուրք-ռուսական հակամարտութիւնը ռազմադաշտ էր մտել: Առաջանում էր ցարական բանակը եւ հայ կամաւորական խմբերը նրա առջեւում: Սիմոն Վրացեանը վկայում է, որ կամաւորական շարժման քաղաքական բնաբանն էր «Ինքնավարութիւն վեց վիլայէթների եւ նրանց անբաժան մաս՝ Կիլիկիայի՝ Ռուսաստանի հզօր հովանաւորութեան տակ»:[2] Հայ ղեկավարութեան նպատակն էր զինուած ուժեր ունենալ ռուս-թրքական ռազմաճակատներում՝ հայերին պաշտպանելու, գուցէ նաեւ կոտորածները կասեցնելու: Վրացեանի վկայութեամբ՝ «Պատերազմի սկզբին հայկական շրջանակներում տիրում էր ընդհանուր համոզում, այն

2. Վրացեան Սիմոն, «Հայաստանի Հանրապետութիւն», 3-րդ տպագրութիւն, Թեհրան, տպարան Ալիք, 1982, էջ 10:

է թէ՝ մի քանի ամսուայ մէջ ռուսները կը գրաւեն Վանն ու Երզրումը եւ հայկական շրջանները կ'ազատուեն թիւրքական լծից»:[3] Դա տեղի չունեցաւ: Ուրիշ էր ռուսի քաղաքականութիւնը՝ յար եւ նման երիտթուրքերի: Բարձր Դռան մօտ Ցարական կայսրութեան դեսպան Ալեքսէյ Լոբանով-Ռոստովսկին վաղուց, 1895-1896-ին, բացայայտել էր Ռուսաստանի ցանկութիւնը՝ ունենալ «Հայաստանը առանց հայերի»: Հայաթափումը կատարւում էր, բայց թուրքի ձեռքով: 1916-ին արդէն Թրքահայաստանը դատարկուած էր հայերից: Կամաւորական խմբերը այլեւս պէտք չէին ռուսներին եւ կազմալուծուեցին:

Այս բացասական ազդակների կողքին սակայն անժխտելի է պատերազմի ընթացքում հայ երիտասարդութեան ձեռք բերած ռազմական փորձը: Ըստ Սիմոն Վրացեանի, դաշնակից պետութիւնների բոլոր բանակներում մասնակցած հայ զինուորների թիւը գումարած կամաւորական խմբերի 300.000-ի է մօտենում:[4] Հայ ժողովուրդը իր բաժին մասնակցութիւնն էր բերել պատերազմին: Իսկ Նիկոլ Աղբալեանի բառերով, հայը կարողացել էր «մի իրաւունք, մի հիմք ձեռք բերել Դաշնակիցների համաշխարհային այս յաղթանակի օրերին, իբրեւ այդ մեծ յաղթանակի աջակցողներ՝ փոքրիկ դաշնակիցներ»:[5]

1917թ. մարտին Համառուսական յեղաշրջումը հայ ժողովրդին նոր իրադրութիւն էր պարտադրում՝ նոր յոյսեր, նոր մտահոգութիւններ եւ նոր ծրագիրներ մշակելու անհրաժեշտութիւն. դրանց շարքում՝ Արեւմտահայոց Համագումարը, մայիս 2-11, Երեւանում, Լեւոն Շանթի եւ Արամ Մանուկեանի նախագահութեամբ, այդտեղ ընտրուած Արեւմտահայ Բիւ-

3. Նոյն տեղում, էջ 11:

4. Նոյն տեղում, էջ 16:

5. Մէջբերուած է ՀՅԴ 9-րդ Ընդհանուր ժողովին արտասանած Նիկոլ Աղբալեանի բացման խօսքից: Տես՝ «Յառաջ», Երեւան, 2, 4 Հոկտեմբեր 1919, Ա. Տարի, Թիւ 10,12:

ro, որի նախագահ Վահան Փափազեանի բառերով «հետզհետէ իր ձեռքը ամփոփեց բովանդակ թիւրքահայութեան հանրային ղեկավարութիւնը եւ դարձաւ տեսակ մը ժամանակաւոր կառավարութիւն»[6], Վրացեանը այն անուանում է «արտահողային պետութիւն»:[7] Ահա, պետական մտածողութեան առաջին կայծը Երեւանից: Ապա, սեպտեմբերին Թիֆլիսում «Ազգային Խորհրդաժողով»՝ Օզակոմի[8] գործունէութիւնը քննարկելու, որ անբաւարար էր, մանաւանդ՝ հայկական հարցերի իմաստով: Թոյլ էր հայերի ներկայացուցչութիւնը յանձին ռուս կադետ կուսակցութեան անդամ՝ Միքայէլ Պապաջանեանի, որ հայկականութիւնից ու հայութիւնից հեռու անձ էր: Օզակոմը իր վրացի, թաթար եւ հայ ներկայացուցիչներով, մրցակցութեան դաշտի էր վերածուած՝ իւրաքանչիւրը իր ազգի համար աւելի մեծ բաժին խլելու: Անդրկովկասի քաղաքական արեւելման վրայ տիրական էր վրացի մենշեւիկների տեսլականը եւ թաթարների ուժը: Նիկոլ Աղբալեանի կարծիքով, հայ ժողովրդի պահանջները թոյլ հիմքեր ունէին ոչ այնքան Պապաջանեանի թուլութեան եւ անտեղեակութեան պատճառով, որքան «հայի ինքնազգացման թուլութիւնից»:[9] Նրա կարծիքով, ի տարբերութիւն վրացու եւ թուրք-թաթարի, հայը պատմութեան մէջ աւելի իշխուողի իրավիճակում էր եղել քան իշխողի, եւ այդ հոգեբանութիւնը իր դրոշմն էր դրել հայի աշխարհընկալման վրայ: Պատճառ էր նաեւ հայ ժողովրդի ցրուածութիւնը: Հայը իր իսկ հողի վրայ միատարր չէր եղել ու միշտ շրջապատուած օտար, իրենից աւելի ուժեղ, իշխող ու կեղեքող տարրերով: Իսկ Ցարական կամ Օսմանեան կայսրութիւններում քաղա-

---

6. Փափազեան Վահան, «Իմ Յուշերը», հատոր երկրորդ, Պէյրութ, Համազգային Ընկերութեան տպարան, 1952, էջ 440:

7. Վրացեան Ս. «Հայաստանի Հանրապետութիւն», էջ 30:

8. Կովկասեան Յատուկ Կոմիտէ, Պետերզբուրգում կազմուած ժամանակաւոր Կառավարութեան կողմից նշանակուած:

9. Վրացեան Ս. «Հայաստանի Հանրապետութիւն», էջ 42:

քական հաշիւներով միշտ արգիլուել էր հայերի կենտրոնացումը հայաբնակ տեղամասերում: Վերջապէս, հայը կիսով կոտորակուած, դեռ իր հոգու վրայ կրում էր անբուժելի վէրքը՝ գաղթականների խեղճ ու ողորմելի տեսքով ներկայացուած:

«Ազգային Խորհրդաժողով»ը իրեն վերապահելով օրէնսդիր մարմնի դերը իր աւարտին հասաւ հոկտեմբեր 9-ին՝ գործադիր մարմնի ընտրութեամբ, որ անուանուեց «Հայոց Ազգային Խորհուրդ»՝ նախագահութեամբ Աւետիս Ահարոնեանի: Մինչեւ անկախ Հայաստանի կառավարութեան ձեւաւորումը (1917թ. հոկտեմբերից 1918թ. օգոստոս 1) այդ մարմինը արեւելահայութեան կառավարութեան դերը կատարեց: Բայց, ի տարբերութիւն Արեւմտեան Բիւրոյի, որ լծուած էր Թրքահայաստանի ռուս զօրքերի գրաւեալ մասում ինքնավարութեան պահանջների եւ վարչական հարցերի ձեւակերպման աշխատանքներին, Ազգային Խորհրդի քաղաքական արեւելումը մնում էր համառուսական, մի մասը նրա պետական կառոյցի եւ սպասում էր Սահմանադիր Ժողովին, որ պիտի երկրի վարչաձեւը որոշէր:

Մէկ անգամ եւս մօտ էր թւում ազատութիւնը: Սակայն, բոլշեւիկեան յեղափոխութիւնը՝ 1917 հոկտեմբեր-նոյեմբերին, Համառուսական Սահմանադիր Ժողովի լուծարումը (1918 յունուար), ռուս-թրքական ռազմաճակատների փլուզումը, Բրեստ Լիտովսկի համաձայնագիրը, այդ յոյսն էլ ջախջախեցին: Վերակազմուած եւ աշխուժացած թուրք բանակի նորանոր գրաւումների պայմաններում մոռացուեց ինքնավարութեան հարցը Թրքահայաստանի, որ արդէն երկրորդ անգամ էր հայաթափուել:

Նոր պայմաններ, դէպի անկախ պետականութիւն

1917-ի բոլշեւիկեան յեղաշրջումից յետոյ, Օզակոմին փոխարինեց Կոմիսարիատը, օրէնսդիր մարմին ունենալով

Սէյմը, որ 1918-ի ապրիլ 9-ին (նոր տոմարով 22)[10] թուրք բանակի առաջխաղացքը կասեցնելու եւ բանակցութիւնները շարունակելու համար, Անդրկովկասը յայտարարեց անկախ դաշնակցային պետութիւն: Կովկասեան այս պատերազմում վրացիները որոշ հողային կորուստներից յետոյ խոյս էին տուել, իսկ մահմեդականները երբեք չմասնակցեցին թուրքերի դէմ մղուած պատերազմին: Հայերը միայնակ պիտի պաշտպանէին Անդրկովկասի հայ բնակչութիւնը:

Ռազմաճակատներում ճգնաժամ էր, իսկ դաշնակիցները անտարբեր էին եւ նոյնիսկ բացասական վերաբերմունք էին ցոյց տալիս: Վրացիներն ու թաթարները բացայայտ եւ գաղտնի հովանաւոր էին փնտրում: Մայիս 15-ին թուրք բանակը սկսեց ռմբակոծել Ալեքսանդրապոլը: Հայկական շրջանները ամէն կողմից յարձակման տակ էին: Թուրք բանակին դիմադրելու, թաթար խռովութիւնները սաստելու, հայ բոլշեւիկ տարրերի հրահրած անկարգութիւններին դէմ դնելու համար միակ մարմինը Երեւանի Ազգային Խորհուրդն էր, որ 1917-ի դեկտեմբերից Արամ Մանուկեանի Երեւան գործուղուելուց յետոյ տէր էր դարձել իրավիճակին: 1918-ի մարտին, անկառավարելի իրավիճակը դիմագրաւելու համար, Երեւանի Ազգային Խորհուրդը Արամին նշանակել էր դիկտատոր՝ զանազան բնագաւառների վարիչներով, նրանց մէջ Երեւան նահանգի զինուորական կոմիսար Դրօն: Սա իրականութեան մէջ Արարատեան դաշտի առաջին կառավարութիւնն էր:

Անակընկալ էր Վրաստանի անկախութեան յայտարարութիւնը (մայիս 26, 1918): Հայ ղեկավարութիւնը շփոթի էր մատնուել: Նոյն օրը գումարուած Ազգային Խորհրդի ժողովը փոխանակ անել վիճակից դուրս գալու համար ճամբայ փնտրելու, պախարակում էր վրաց ղեկավարներին՝ առանց

10. 1918թ. յունուարի 31-ին Ռուսաստանը նոր տոմարին անցաւ՝ 13 օր յաւելելով: Այդ թուից յետոյ այս յօդուածում նշուած թուականները նոր տոմարով են:

հայութեան համար մտածելու նման քայլ առնելու ու դաւաճան անուանում նրանց: Նոյն գիշեր գումարուած ՀՅԴաշնակցութեան Թիֆլիսի ներկայացուցչական ժողովը եւ թաղային կոմիտեների արտակարգ նիստը աւելի վճռական էր: Ժողովից բխած «Հայոց Ազգային Խորհրդին կառավարական ֆունկցիաներ տալու մասին» կոչուած բանաձեւը փաստագրում է այդ քայլը, «Նկատի ունենալով այն, որ Անդրկովկասեան Սէյմի ինքնացրումից եւ Վրաստանի անկախութիւն յայտարարելուց յետոյ լուծուելու է Անդրկովկասեան կառավարութիւնը, եւ հայ ժողովուրդը մնալու է բախտի բերմունքին ...գտնում է անհրաժեշտ, որ Հայոց Ազգային Խորհուրդը, ուժեղացնելով իր կազմը, անցնի գործելու հայութեան կենտրոնում, ստանձնելով կառավարական ֆունկցիաները...»:[11] Դրան հետեւում է 1918, մայիս 30-ի յայտարարութիւնը «Հայաստանի անկախութեան հռչակման մասին», ուր Ազգային Խորհուրդը «ժամանակաւորապէս» ինքն իրեն յայտարարում է «հայկական գաւառների գերագոյն եւ միակ իշխանութիւն»:[12] Երկուսի մէջ էլ, ի տարբերութիւն Վրաստանի եւ Ադրբէջանի անկախութեան յայտարարութիւնների, բացակայում են անկախութիւն եւ հանրապետութիւն բառերը: Մտավախութիւնը երեւի բխում էր նրանից, որ Հայաստանը միայնակ, առանց հովանաւորի, կարող էր անմիջապէս թուրքի թիրախ դառնալ: Զանց առնենք հոգեբանական ազդակները:

Առաջին խարխափումներից եւ անորոշութիւնից յետոյ, սակայն, հայ քաղաքական ղեկավարութիւնը կառչեց ստեղծուած առիթին, եւ այդտեղ տեղի ունեցաւ հայ քաղաքական մտքի զարգացման մեծ թռիչքը դէպի անկախ պետականու-

---

11. «Հայաստանի Հանրապետությունը 1918-1920թթ. (Քաղաքական պատմություն)", Փաստաթղթերի եւ նյութերի ժողովածու», (այսուհետ «Քաղաքական պատմություն»), Երևան, ԳԱԱ «Գիտություն» հրատ., 2000, փաստաթուղթ 10, էջ 17: Յղում է կատարուած Ս. Վրացեան «Հայաստանի Հանրապետութիւն», Փարիզ, 1928, էջ 130-131:

12. Նոյն տեղում, փաստաթուղթ 12, էջ 18:

թիւն, որ յաջորդ հանգրուանն էր մէկ դար մտաւորական դեգերումների, կրթական ու քաղաքական գործունէութեան:

Ազգային անկախ պետութիւն, հայ քաղաքական մտքի զարգացման գագաթ

Ազգային պետութիւնը, եթէ բխում է ժողովրդի կամքից ու ծառայում է իր ժողովրդի զանգուածային շահերին, պիտի նպատակադրի ամրագրել երկրի սահմանները եւ դերն ու դիրքը համաշխարհային, համամարդկային մեծ ընտանիքում: Պէտք է հայթայթի եւ ապահովի իր քաղաքացիների մշակութային ստեղծագործութեան հնարաւորութիւնը, կրթական համակարգի զարգացումը, լեզուի մշակումը, հաղորդակցութեան մէջ մտնի ուրիշ ազգերի հետ, փոխ առնի լաւը, մերի, ազգայնացնի եւ այն կիրարկի ի շահ իր ժողովրդի: Սա վերիվարոյ ժողովրդավարական սկզբունքներն են, որոնց իրացման ճիգերին «անձեւ քաօսից» պետականութեան կառուցմանը ականատես ենք Հայաստանի անկախ պետութեան կարճ կեանքում:

Երեւանում, Օգոստոս 1-ին, Հայաստանի Խորհուրդի կամ Խորհրդարանի հանդիսաւոր բացմանը որպէս աւագագոյն պատգամաւոր ժամանակաւոր նախագահ ընտրուած Աւետիք Սահակեանը (Հայր Աբրահամ) իր բացման խօսքում գումարուած Ազգային Խորհուրդը յայտարարում է իբրեւ միակ լիազօր մարմինը՝ Հայաստանի հանրապետութեան պետական իշխանութիւնը իր մէջ ամփոփող:[13] Նրա խօսքով, «գցուած էր խարիսխը մեր պետական նաւի»: Դրուած էր հիմքը պետական շէնքի՝ «ձգտելով միշտ կատարելագործել նրան ի բարօրութիւն Հայաստանի Հանրապետութեան բոլոր ազգութիւնների իբրեւ զաւակների մէկ հարազատ մայր հայրենիքի»:[14]

---

13. «Քաղաքական պատմություն», փաստաթուղթ 32, էջ 54:
14. Նոյն տեղում, էջ 55-56:

Նոյն առիթով վարչապետ Յովհաննէս Քաջազնունու զգացական ճառը հայելին էր երկրում տիրող անյուսալի իրավիճակի՝ սով, համաճարակ, հարիւր հազարաւոր անտուն գաղթականներ, քանդուած տնտեսութիւն, օրէնքի ու ապահովութեան բացակայութիւն: Իսկ յաջորդ օրերին Խորհրդարանին առաջադրած կառավարութեան ծրագիրը՝ համեստ, սահմանափակ, առաջին անհրաժեշտութիւն ներկայացնող, համահունչ էր երկրի զերոյական կարողութեան պայմաններին:

Բաւական սուր քննադատութիւններից յետոյ, վերջապէս Ազգային Խորհուրդում ներկայացուած կուսակցութիւնները վստահութեան քուէ տուեցին վարչապետ Քաջազնունուն եւ իր վարչակազմին: Այդ քննադատութիւնների ծիրում յատկանշական է սոցիալ-դեմոկրատ ներկայացուցիչներից միակ բոլշեւիկ՝ Արշաւիր Մելիքեանի ելոյթը, որ առիթը օգտագործեց ծաղրելու ազգային անկախութիւն կոչուածը եւ կոչ արեց օր առաջ միանալ Ռուսաստանին:[15]

Դաշնակցութեան տիրական դիրքը խորհրդարանում եւ կառավարութեան մէջ դժգոհութեան եւ անհանդուրժողութեան առիթ էր տուել միւս կուսակցութիւններին, որոնք մերժել էին համագործակցել: Իրականութիւնը թելադրում է, սակայն, որ տարիների գործի դաշտում յեղափոխական, քաղաքական եւ վարչական փորձ ամբարած դաշնակցական գործիչները, բնականաբար, պիտի լինէին նաեւ առաջնորդը Հայաստանի անկախութեան նոր պայքարի ճանապարհին:[16]

---

15. Յովհաննիսեան Ռիչըրդ, Armenia on the Road to Independence, Berkeley and Los Angeles, University of California Press, 1967, էջ 213: Յղում է կատարուած Խոնդկարեանի «Արձանագրութիւններ»ին:

16. Դաշնակցութեան վայելած ժողովրդականութեան եւ հայ ժողովրդի մեծամասնութեան վստահութեան մասին է խօսում Ռիչըրդ Յովհաննիսեանը եւ որպէս ապացոյց բերում է Համառուսական սահմանադրական ժողովի ներկայացուցիչների ընտրութեան արդիւնքները. Անդրկովկասում՝ Սոցիալ-դեմոկրատ մենշեւիկները՝ 603.934, թաթարների ղեկավար կուսակցութիւն՝ Մուսաւաթը՝ 615.816, Դաշնակցութիւնը՝ 558.440, սոցիալիստ-յեղափոխականները՝ 117.522, սոցիալ-դեմոկրատ բոլշեւիկները, որոնք մեծ մասամբ Կովկասում տեղակայուած ռուս զինուորներն էին՝ 93.581: Տես, Յովհաննիսեան Ռիչըրդ, The Republic of Armenia, Volume I, The First Year, 1918-1919, Berkeley, Los Angeles, and London, University of California Press, 1971, էջ 18-19:

1918-1920 անկախ Հայաստանում

Պետականաշինութիւնը ձեւաւորուեց երեք գլխաւոր հաստատութիւնների ճամբով, նկատի ունենալով, որ ազգային անկախ եւ ժողովրդավարական պետութեան օրէնսդիրը կարգւում է պատասխանատու ժողովրդին, վարչակազմը՝ օրէնսդիր մարմնին: Ազատ ընտրութիւնների կարելիութեան չգոյութեան պատճառով ձեւաւորուած Խորհուրդը կամ պառլամենտը կազմուած էր Թիֆլիսի Ազգային ժողովում ձեռք բերուած համաձայնութեամբ եւ բազմակուսակցական ներկայացուցչութիւն ունէր (մեծ դժուարութիւններով ու նոյնիսկ արհեստականօրէն կիրարկուած): Ներկայ էին բոլոր կուսակցութիւնները՝ անկախ իրենց իրական թուից: Խորհուրդին մասնակցում էին նաեւ ազգային փոքրամասնութիւնները: Համակարգը խորհրդարանական էր, որի ներկայացուցչական բնոյթը եւ բանեցրած ազդեցութիւնը գործադիրի որոշումների եւ գործունէութեան վրայ լրացնում էր քոալիսիոն կառավարութեան չգոյութեան բացը: Իսկ աշխատանքին վերահասու խորհրդարանական յանձնախմբերին մասնակցում էին տարբեր կուսակցութիւններ եւ անկուսակցականներ:

Նորակազմ խորհրդարանում բացակայում էր ժողովրդավարութեան մէկ կարեւոր սկզբունքը՝ ազատ ու անկաշկանդ ընտրութիւններ: Ժամանակի իրականութեան ամենանեղ ծանօթութեամբ կարելի է ասել, որ ազատ ընտրութիւններ կազմակերպելը անկարելի էր: Դա պիտի իրականանար յաջորդ տարին, 1919-ի յունիսին, որից առաջ, մարտի 31-ին հրատարակուեց «Օրէնք Հայաստանի պառլամենտի ընտրութեան»ը, միանգամայն համապատասխան Հայաստանի պետականութեան ժողովրդավարական հիմունքներին: «ՀՀ պառլամենտի անդամներին ընտրում ազգաբնակչութիւնը, առանց սեռի խտրութեան՝ ընդհանուր հաւասար ընտրական իրաւունքի հիման վրայ, ...որոնց քսան (20) տարին լրանում է ընտրութեան օրը...»:[17] Չկար կրօնական, սեռային եւ ցեղային խտրականութիւն:

17. «Քաղաքական պատմություն», փաստաթուղթ 77, էջ 96:

Ընտրութիւնները բոյկոտեցին սոցիալ-դեմոկրատ բոլշեւիկները: Նրանց համար երկիրը շատ ազգային էր եւ մեծապէս շեղուած Մարքսիզմից, անկախութիւնը անիմաստ էր եւ ժողովրդի փրկութիւնը օր առաջ Սովետական Ռուսաստանին միանալն էր: Ժողովրդականները (հայ կադետներից կազմուած) նոյնպէս վերջին վայրկեանին բոյկոտեցին ընտրութիւնները: Այնուամենայնիւ, յստակ է, որ այդ կուսակցութիւնները, եթէ նշանակովի կարգադրութեամբ Խորհուրդի մաս էին կազմել, ընտրութիւններում այդ առիթը չէին ունենալու:[18]

Այսպէս, ժողովրդավար պետութեան սկզբունքային համակարգի լիարժէք իրացմանը ձգտեցին իրարայաջորդ իշխանութիւնները: Թէ որքանո՞վ յաջողեցին, պետական ենթակառոյցների ուսումնասիրութեամբ փորձել եմ պարզել պատկերը՝ ձեռքբերումներն ու ձախողումները:

Պատերազմի ու կոտորածների արդիւնքում յօշոտուած Հայաստանում, ամենից դժուարին բնագաւառը երկրի տնտեսութեան վերականգնումն էր: Հայաստանի իշխանութեանը ժառանգութիւն էր հասել քայքայուած, աւերակ դարձած գիւղատնտեսութիւն, որի համար մեղադրւում էր հենց ինքը իշխանութիւնը, որի ունեցած միջոցները երբեք բաւարար չէին բնագաւառը բարելաւելու: Այնուամենայնիւ, անհատ առ անհատ յաջորդական վարչակազմերի ծայր աստիճան նուիրուածութիւնն ու զոհաբերութիւնը (հանգստաւէտ ու բարոր կեանքը մերժած, աղքատ ժողովրդի ապելակերպի մակարդակին իջած) գործեց որպէս զէնք՝ ՀՀ պետական մեքենան շարժելու եւ այն քայլ առ քայլ կատարելագործելու դժուարին պայքարի մէջ:

---

18. 150.723 քուէների ընհանուր թուից Դաշնակցութիւնը ստացել էր 131.755 քուէ, Սոցիալիստ-յեղափոխականները՝ 6413, Հայ ժողովրդական կուսակցութիւնը՝ 758: Տե՛ս «Քաղաքական պատմություն», փաստաթուղթ 99, էջ 113: Այսօր, հետադարձ հայեացքով, կարելի է տեսնել, որ Դաշնակցութեան յաղթանակը (ձայների 90% եւ խորհրդարանական բացարձակ մեծամասնութիւն) երկրի վարչամեքենային զրկեց առողջ ընդդիմութեան ներկայութիւնից: Խախտուեց ժողովրդավարական մի կարեւոր սկզբունք:

Հետզհետէ, աւելի կայուն իրավիճակի ստեղծումը ժողովրդական կուսակցութեանը քաջալերեց կառավարութեան մէջ մտնել: Նրանց վերցրած երեք նախարարութիւններում՝ ֆինանսներ, արդարադատութիւն եւ հանրային կրթութիւն, մշակուեցին նորարար ծրագիրներ: Բայց քոալիսիոն կառավարութիւնը երկար չտեւեց: Երկրի տագնապալի վիճակից յուսախաբուած ժողովրդական նախարարները մէկ մէկ զանազան պատճառաբանութեամբ լքեցին Երեւանն ու Թիֆլիս վերադարձան:

Հանրապետութիւնը ապակենտրոն վարչաձեւով օժտելու համար զարկ տրուեց համայնքային ինքնակառավարման. բայց գործին խանգարում էր ցարական իշխանութեան թոյլատրած գողութիւնը, կաշառակերութիւնը, որ չէր պակասում Հայաստանում: Այդ ծիրում, արդարադատութեան հիմերը զօրացնելու համար կազմուեցին շրջանային դատարանները (circuit courts), դատաստանական պալատ (palace of justice), ծերակոյտ (որ supreme court-ի դերն ունէր): Առաջադրուեց նաեւ քաղաքացիների մասնակցութիւնը դատավարութիւններին (jury trial).

Լեզուի մշակման գործում նախաձեռնութիւնները ամենուրեք էին: Ռուսախօս բիւրոկրատիան եւ ռուսալեզու գործառոյթները պէտք էր հայացնել, պէտք եղած եզրոյթները յօրինել եւ ընդհանրականացնել: Օրինակ, դատական համակարգը հայերէնով վարել: Նման մի իրավիճակում, երբ հայերէնը արհամարհուած էր եւ ռուսերէնի մենատիրութեան ներքոյ խեղճացած ու անգործութեան մատնուած, հաշուարկուած ծրագիր եւ, մանաւանդ, համարձակութիւն էր պէտք հայերէնը պետական լեզու հռչակելը (դեկտեմբեր 26, 1919):[19]

Զօրաւոր բանակ ունենալու բաղձանքը միշտ մնաց անիրագործելի: 1917 թիւ սեպտեմբերի Ազգային Խորհրդաժողովում որոշուած եւ Պետերզբուրգի ժամանակաւոր կա-

19. «Քաղաքական պատմություն», փաստաթուղթ 138, էջ 151:

ռավարութեան հաւանութեամբ կազմուած հայոց ազգային զօրամասը (ազգային կորպուս) դարձել էր կորիզը հայկական բանակի, որ ունէր ռուսական կրթութիւն ստացած եւ Առաջին համաշխարհային պատերազմին մասնակցած ուժեղ սպայակոյտ: Այնուամենայնիւ, ռուս զինուորական վարժարաններում դաստիարակուած այժմ Հայաստանի բանակի ղեկավարութիւնը ստանձնած սպայութիւնը, որքան որ դրական երեւոյթ էր անկախ Հայաստանի կեանքում, անխուսափելի էր նրա անհամաձայնութիւնը բանակին միացած ֆիդայական խմբերի կիրառած մեթոդների եւ ռազմավարութեան հետ, որ շատ անգամ արեւմտահայի եւ ռուսահայի հարց էր դառնում: Միւս կողմից, թաթարների եւ վրացիների հետ շարունակական ընդհարումները կլանում էին ու վատնում բանակի մարդոյժն ու կարողականութիւնը:

Պետականաշինութեան անդաստանում Հայաստանը պիտի ինքն իրեն փաստէր կովկասեան տարածաշրջանում եւ անդին ու գտնէր համակեցութեան լաւագոյն պայմանները: Աղբալեանը խօսում է համերաշխութեան մասին, «...որ չի յարուցում անհաւասարակշռութիւն, չի մտցնում կողմերի մեջ դիմազրկում եւ յոխորտանք, նոյնիրաւ համերաշխութեան է ձգտում միշտ Դաշնակցութիւնը, որի համար սակայն ստիպուած է պայքարել քանի դեռ շրջապատը չի համոզուած թէ գործ ունի նոյնիրաւ մի ժողովրդի հետ»:[20] Յարաբերութիւններ հարեւանների հետ որպէս հաւասար հաւասարի եւ ո՛չ թոյլի եւ ուժեղի դիրքերից:

Երկիրը տագնապալի վիճակի մատնուեց 1920թ. մայիսմեկեան բոլշեւիկ ապստամբութիւնից յետոյ, որը սաստելու ու երկրի ներսում խաղաղութիւնն ու կարգապահութիւնը վերահաստատելու համար, պետական յարուածի ուժգնութեամբ Դաշնակցութեան Բիւրօն իր ձեռքն առաւ երկրի իշ-

20. Մէջբերուած է ՀՅԴ 9-րդ Ընդհանուր ժողովին Նիկոլ Աղբալեանի բացման խօսքից: Տես «Յառաջ», Երեւան, 2, 4 հոկտեմբեր 1919, Ա. տարի, թիւ 10, 12:

խանութիւնը: Դա արդէն ժողովրդավարութեան հակադրութիւն էր. իսկ մահապատժի սահմանումը՝ արագօրէն եւ առանց բարդութիւնների պատժելու իշխանութեան ընդդիմութեան (մայիս 6, 1920) ուղղակի շեղում էր արձանագրում:[21] Դրան հետեւեց «ժամանակաւոր օրէնք»ի հաստատումը, ուր սահմանւում էին մահապատժի արժանի յանցագործութիւնները:[22]

Բիւրօ-կառավարութեան գործունէութիւնը, մանաւանդ՝ թուրք բանակի յառաջացումն ու զօրահաւաքի անյաջողութիւնը աւելի լարեց ընդիմադիրների դժգոհութիւնը: Ժողովրդական կուսակցութիւնը, որ դուրս էր մնացել խորհրդարանից եւ կառավարութիւնից, յուշագիր ներկայացրեց բիւրօ-կառավարութեան հրաժարուելու (հոկտեմբեր 31, 1920) եւ երկրի ղեկավարութիւնը յանձնելու «Հայաստանի անկախութիւնը ընդունող բոլոր քաղաքական հոսանքներից, պայմանով որ Դաշնակցութիւնը լինի փոքրամասնութեան մէջ, եւ վարչապետը լինի ոչ դաշնակցական»:[23]

Խոչընդոտներ, կործանարար ազդակներ

Հայոց ժողովրդավարական պետականաշինութեան ընթացքը եւ պետական մտածողութեան արմատաւորումը սահուն ընթացք չունեցաւ: Մեծ էին ծառացած խոչընդոտները ի սկզբանէ:

Նորանկախ Հայաստանի ամբողջ տարածքում թաթարական ճնշիչ ներկայութիւնը եւ շարունակական ապստամբութիւնները քայքայեցին պետական ներուժը:

Հայաստանի սահմանային շրջանները միշտ վտանգուած մնացին, վիճելի տարածքներ յայտարարուեցին ու Հայաս-

---

21. «Քաղաքական պատմութիւն», փաստաթուղթ 164, էջ 187:
22. Նոյն տեղում, փաստաթուղթ 165, էջ 169:
23. Նոյն տեղում, փաստաթուղթ 278, էջ 323-325:

տանից կտրուեցին քանի որ թէ՛ Վրաստանը եւ թէ՛ Ադրբէջանը, ցարական Ռուսաստանի թողած տնտեսական, ռազմական, վարչական հարուստ ենթակառոյցները ժառանգած եւ աշխարհին որպէս ցանկալի դաշնակից-գործակից ներկայացած, իրենց ճնշումներով միշտ խոցելի դիրքում պահեցին Հայաստանին, որ միջազգային ճամբաներից զրկուած (landlocked) միանգամայն կախեալ էր թշնամի հարեւաններից՝ անգամ ամենապարզ հաղորդակցական միջոցների տեսակէտից:

Յետոյ, անհամերաշխութիւն եւ անհանդուրժողականութիւն, որ իր առաջին արտայայտութիւնը գտաւ հենց անկախութեան առաջին օրերին: 1918 թ. յունիսի 9-ին Թիֆլիսում, «մի խումբ անկուսակցական հայ գործիչներ» անուան տակ ժողով հրաւիրուեց: Որոշում կայացաւ յանձնարարել Ազգային խորհրդին կազմելու «ժամանակաւոր կառավարութիւն, յանձնելով դորա իրագործումը Հայ ժողովրդական կուսակցութան, յանձին Միքայէլ Պապաջանեանի»:[24]

Ժողովրդականներն ու սոցիալիստ-յեղափոխականները այնքան առաջ էին գնացել իրենց պահանջների մէջ, որ երբ Արամ Մանուկեանի Երեւանից յղած վերջնագրի արդիւնքում Քաջազնունու կառավարութիւնը Թիֆլիսից Երեւան փոխադրուել էր պատրաստում, իրենք պնդում էին, որ գոնէ Ազգային խորհուրդը մնայ Թիֆլիսում: Իրականութեան մէջ, դրանք պատրաստ չէին Թիֆլիսի հանգիստ ու շքեղ կեանքը թողնել եւ Երեւանի պէս խեղճ ու յետամնաց գիւղաքաղաք տեղափոխուել: Դա էր որոշ հայ ղեկավարների քաղաքական մտածողութեան մակարդակը:

Հայաստանից դուրս ապրող արեւմտահայութեան անվստահութիւնը դէպի Հայաստանի Հանրապետութիւնն ու նրա վարչակազմը կազմակերպուած ուժի վերածուեց Ռամկա-

---

24. Նոյն տեղում, փաստաթուղթ 23, էջ 46: Փաստաթղթի տակ ստորագրել են Յար. Այվազեանց՝ նախագահ եւ Հ. Համբարձումեան՝ քարտուղար:

վար-ժողովրդական միացեալ ճակատի կազմութեամբ՝ գլխաւորութեամբ Պօղոս Նուպար փաշայի ու նրա հրաւիրած «Հայ Ազգային Առաջին Համագումար»ի Փարիզում: Հակադաշնակցական եւ պահպանողական միտումներով ղեկավարուող այս հաւաքը մերժում էր Հայաստանի սոցիալիստ եւ դաշնակցական-մէտ կառավարութիւնը, մերժում էր իր յորջորջած «Արարատեան Հայաստանը» ընդունել իբրեւ կորիզը Միացեալ Հայաստանի: Պահանջում էր կազմալուծել ՀՀ կառավարութիւնը եւ Փարիզում վերակազմել միացեալ կառավարութիւն, դարձեալ Փարիզում ընտրել միացեալ պատուիրակութիւն՝ Հայաստանը Փարիզի խաղաղութեան վեհաժողովին ներկայացնելու համար: Ի հարկէ, Ահարոնեանը կարողացել էր համոզել ՀՀ վարչապետի յաւակնութիւն ունեցող Պօղոս Նուպարին, որ Միացեալ Հայաստանի կառավարութեան վարչապետը պիտի Հայաստանում ապրի եւ ո՛չ եւրոպաներում:[25]

Համադրուած եւ փոխհամաձայնեցուած հայկական պահանջների յուշագիրը վերջապէս Խաղաղութեան Վեհաժողովին ներկայացուեց փետրուարին Պօղոս Նուպարի եւ Աւետիս Ահարոնեանի ստորագրութեամբ:

Յատկանշական նախատեսութեամբ, գուցէ նաեւ ի պատասխան Փարիզում կազմուած համագումարի, 1919-ի փետրուարին Երեւանում կայացաւ Արեւմտահայ երկրորդ համագումարը, որ ճանաչում էր Հայաստանը՝ միացեալ եւ անկախ:[26]

Արեւմտահայութեան անվստահութիւնն ու վախը փարատելու նպատակով էր, որ ՀՀ մինիստրների խորհուրդը 1919թ. մայիս 27-ին որոշում կայացրեց «Հայաստանի խորհրդի կազմը արեւմտահայերի ներկայացուցիչներով ընդլայնել»:[27]

---

25. Մանրամասնութիւնների համար, տես Յովհաննիսեան, The Republic of Armenia, the First Year, էջ 469-471:

26. «Քաղաքական պատմություն», փաստաթուղթ 90, էջ 105:

27. Նոյն տեղում, փաստաթուղթ 89, էջ 106:

Իսկ մայիս 28-ին ՀՀ կառավարութիւնը հռչակեց «Միացեալ Հայաստանի անկախութեան յայտարարման աքտը»:[28]

Միացեալ Անկախ Հայաստանի տեսլականով եւ socialist international կարգախօսներով, սեպտեմբեր 27, 1919, գումարուեց ՀՅԴ 9-րդ ընդհ. ժողովը՝ իր նպատակները վերանայելու եւ բիւրեղացնելու եւ որոշ միտումով էլ նաեւ այդ խոչընդոտները հարթելու ճիգով: Ռուսահայաստանի եւ Թուրքահայաստանի ինքնավարութեան հասնելու նպատակին փոխարինում էր Միացեալ Հայաստանի անկախութիւնը:

Խոչընդոտների շարքում պիտի նշել նաեւ ներկուսակցական տարաձայնութիւնները: Կառավարութեան հաստատութիւնների մէջ ընդգրկուած դաշնակցական ղեկավարների եւ, մանաւանդ, Քաջազնունու շեշտուած ճիգը իշխանութեան հեղինակութիւնը բարձրացնելու եւ այն կուսակցական հարցերից ու գործունէոբթիւնից վերադասելու, անհամաձայնութիւների ու անհատական լարուածութեան, նոյնիսկ թշնամութեան պատճառ դարձաւ: Ռուբէն Տէր Մինասեանի եւ իր համախոհների կարծիքով, այդ յեղափոխական ժամանակներում կառավարութիւնը պիտի գործէր Բիւրոյի թելադրանքով՝ որպէս միակ միջոց երկիրը ներկայ ողբալի ճգնաժամից դուրս բերելու համար: Միւս բեւեռում, Ալեքսանդր Խատիսեան, Սիմոն Վրացեան եւ համախոհներ, փորձում էին ամրագրել կուսակցութիւն-պետութիւն բաժանումը՝ չնմանուելու համար բոլշեւիկեան օրինակին:

Բոլշեւիկեան ապստամբութիւնը եկաւ նժարը թեքելու դէպի երկրի կառավարման Բիւրոյի անմիջական միջամտութիւն: Կազմուեց Բիւրո-կառավարութիւն:

Կասեցուեց կուսակցութիւն-կառավարութիւն անջատումը: Բիւրօն շարունակեց ինքն իրեն վեր դասել կառավարութիւնից եւ իր գաղափարներն ու կարծիքը պարտադրել:

---

28. Նոյն տեղում, փաստաթուղթ 90, էջ 105:

Նոյն ծիրում, Բիւրօն չպիտի արտօնէր ֆիդայական խմբերին այսպէս կոչուած մաուզերիստներին, առօրեայի դատական, կարգապահական խնդիրները պատկան կառոյցներին թողնելու փոխարէն իրենց ձեռքն առնելու: Զէնքի ազատ գործածութիւնը հանրապետութեան մէջ ի սկզբանէ արգելակել էր օրէնքի գերակայութիւնը եւ քաղաքացիների ապահովութիւնը: Արեւմտահայ ֆիդայական խմբերը մերժում էին զէնքը ցած դնել: Դեռ անկախութեան առաջին ամիսներին Արամ Մանուկեանը, որպէս ներքին գործերի մինիստր, քաղաքացիութեան զինաթափման առաջարկ էր ներկայացրել պառլամենտին, որ բուռն վիճաբանութեան առիթ էր ստեղծել ու հակա-դաշնակցական կրքեր դրսեւորել: Այն կուսակցութիւնները, որոնք Դաշնակցութեան վարած ազատագրական պայքարի ամբողջ ընթացքում մեղադրել էին ժողովրդին զէնք բաժանելու մէջ, այժմ դէմ էին գնում զինաթափման: Կիսուած էր նաեւ դաշնակցական կարծիքը: Եւ իրողութեան մէջ երբեք հնարաւոր չեղաւ «զինաթափումը» լիովին իրագործել:

Հայաստանի անկախ պետականութեան կարճ կեանքում ամենից մեծ, ամենից վտանգաւոր եւ մահաբեր խոչընդոտը հայ բոլշեւիկների գործունէութիւնն էր, որ թոյլատրուեց Հայաստանում: Կառավարութիւնը այն ժամանակ միայն հակազդեց, երբ բոլշեւիկ շարժումը արմատ էր նետել դժգոհ հասարակութեան մէջ:

Դեռ սկզբից, երբ ռուս-թրքական ճակատը եւ թրքահայութեան ճակատագիրը անտարբերութեան էր մատնուում եւ հայ կամաւորական խմբերը կազմալուծման էին ենթարկուում, երբ հայ մտաւորականութիւնը մտահոգուած Պետերզբուրգում համագումար էր կազմակերպում, «ձախ» սոցիալ-դեմոկրատները, որոնք յետոյ բոլշեւիկներ կոչուեցին, ընդդիմադիր էին խաղում եւ համագումարը խանգարելով, իրենց յանգերգն էին կրկնում, ու պայքար «էմպէրիալիստական-նուաճողական արշաւանքներու դէմ», պատերազմի դադարեցում «առանց հողային կցումներու ու պատերազմական տու-

գանքի» գոչում:[29] Նոյն ընդդիմութիւնը գործում էր նաեւ 1917-ի սեպտեմբերին Թիֆլիսում կազմուած Ազգային Համագումարում «նեղ ազգայնականների», այսինքն՝ Դաշնակցութեան եւ Պետերզբուրգի ժամանակաւոր կառավարութեան դէմ: Ու երբ հարց առաջացաւ Թրքահայաստանի պաշտպանութեան համար հայկական զօրամաս կազմել, ինչպէս Վահան Փափազեանն է գրում, «Նորընծայ համայնավարներ յանձին Գուրգէն Հայկունիի ...ամբոխը կը գրգռէին՝ յորդորելով չը մասնակցիլ հայկական բանակին, որը ըստ իրենց էմպէրիալիստներու գործիքը պիտի դառնար»:[30]

Հայ բոլշեւիկների 1918-1920 թուականների կործանիչ գործունէութեան մասին չպիտի անդրադառնամ: Դա իմ ակադեմական գործունէութեան մի մասնիկն է «Հայաստանը ՀՅԴ-Բոլշեւիկ Յարաբերութիւնների Ոլորտում, 1917-1921» մենագրութեան եւ յետագայ յօդուածների մէջ պարփակուած: Իմ կարծիքով, «Բոլշեւիզմը ազգութիւնների եւ. Մանաւանդ. փոքր ազգութիւնների իրաւունքները շահատակող, արդարութեան գերեզման էր միայն: Քաղաքական, դիւանագիտական որեւէ միջոցառում հնարաւորութիւն պիտի չունենար Հայաստանի անկախութիւնը փրկելու բոլշեւիկեան ամբողջատիրական ծրագիրների եւ փանթուրանական ձգտումների, մանաւանդ այդ՝ երկու հզօր գաղափարաբանութիւնների ժամանակաւոր զօրակցութեան առջեւ»:[31]

Միայն աւելացնեմ, որ հակառակ այն պնդումներին, թէ՝ եթէ Բիւրօ-կառավարութիւնը բոլշեւիկների ձայնը խեղտելու փոխարէն հենց մայիս ամսին ընդունէր խորհրդային կարգերի հաստատումը Հայաստանում, Հայաստանը իր այդ օրուայ տարածքով կը միանար Խորհրդային Ռուսաստանին եւ չէր

---

29. Փափազեան, «Իմ Յուշերը», էջ 448:

30. Նոյն տեղում, էջ 452:

31. Փիրումեան Ուբինա, «Հայաստանը ՀՅԴ-Բոլշեւիկ Յարաբերութիւնների Ոլորտում, 1917-1921» (Երեւան, Երեւանի համալսարանի հրատարակութիւն, 1997), էջ 375-376:

մասնատուի: Այդ օրերի իրարայաջորդ դէպքերը, սակայն, ցոյց են տալիս, որ Կարմիր Բանակը հակառակ հայ բոլշեւիկների շարունակական դիմումներին չմտաւ Հայաստան: Թուրք-ռուսական գաղտնի համաձայնութիւնը այլ նպատակներ էր հետապնդում եւ արդէն նախատեսել էր տարածքային զիջումներ Թուրքիային եւ խորհրդայնացած Ադրբէջանին: Այդպիսով, Ռուսաստանը իր դիրքը Կովկասում ամրապնդելով կը տիրէր նաեւ Հայաստանին, կարեւոր չէ, թէ մասնատուած, երբ թուրք-ռուսական ծրագիրը իրացուած լինէր. իսկ հայ բոլշեւիկները այդ դաւադրութիւնը կոյր գործիքն էին:

Եւ այս յօդուածը աւարտելու համար՝

1920-ի սկիզբներին, կարելի է ասել, որ Հայաստանի պետականութիւնը արդէն ամուր եւ ապահով դիրքերի մէջ էր գտնուում: Զգալի յառաջդիմութիւն կար, մեծ էին քայլերը վերացնելու խոչընդոտները: Յաղթահարուած էին սովն ու համաճարակ հիւանդութիւնները: Երկրի վարչական մեքենան ինչպէս եւ բանակը անհամեմատ աւելի կազմակերպուած էր: Ի գործ էր դրուած տեղական ինքնակառավարման ծրագիրը (*զեմստուօ*): Պետական ենթակառոյցները ներթափանցել էին ամենուրեք: Անկախ Հայաստանի Դաշնակիցների դեֆաքտօ ճանաչումը աւելացրել էր կառավարութեան վարկը թէ՛ ներսում եւ թէ՛ համաշխարհային յարաբերութիւնների ոլորտում, որով եւ «մօտեցնելով ազգային նպատակների իրագործումը», ինչպէս գրում է Խատիսեանը Ահարոնեանին յղած իր փետրուար 6, 1920 թուակիր նամակում:[32] Զանգեզուրը, հակառակ Ադրբէջանի նկրտումների, Հայաստանի կազմում էր գտնուում: Դաշնակիցների հայանպաստ որոշումը եւ Հայաստանի սահմանների վերջնականացումը ժամանակի հարց էր համարուում: Պետականաշինութիւնը աւարտուած էր. պետական մտածողութիւնը լայն արմատականա-

32. Յովհաննիսեան Ռիչըրդ, The Republic of Armenia, Volume II, 1919-1920, Berkeley, Los Angeles, and London, University of California Press, 1982, էջ 529-530:

ցում էր ձեռք բերել ղեկավարութեան մէջ ներսում եւ դրսում: Հայ ժողովուրդը, որին Նիկոլ Աղբալեանը անցեալի «մի անկերպարան զանգուած» էր պիտակել, ըստ հենց իր արժեւորման, «իր քաղաքական կերպարանաւորման շրջանի մէջ» էր:[33] Ազգային նպատակներն ու իրագործման տեսլականը դրոշմուել էր նրանց մտահորիզոնի վրայ: Հայկական հարցը, Հայ Դատը իր լուծումին էր մօտենում: Ո՞վ կարող էր նախատեսել, որ Ամերիկան պիտի մերժէր Հայաստանին հովանաւորել, Դաշնակիցները պիտի դանդաղէին ու աշխարհաքաղաքական դասաւորումների մէջ նոր գործընկեր դաշնակիցներ փնտրէին, Ազգային Թուրքիան գլուխ պիտի բարձրացնէր եւ իր բանակը դէպի արեւելեան սահմանները շարժէր՝ երիտթուրքերի անկատար երազը իրականութիւն դարձնելու, բոլշեւիկ Ռուսաստանը իր ներքին հարցերը լուծած դէպի Կովկաս պիտի իջնէր եւ քեմալական Թուրքիայի հետ Կովկասը կիսելու համաձայնութիւններ կնքէր, իսկ հայ կոչուած բոլշեւիկների ձեռամբ պիտի իջնէր վերջին հարուածը՝ հայոց ազգային պետականութեանը ու եօթանասուն տարիների ապազգային քաղաքականութեամբ թմրեցնէր հայ մարդու ազատատենչ ոգին ու պահէր միշտ կախեալ:

Ցաւոտ իրողութիւն է, որ 1918-ին, դարերի ստրկութիւնից յետոյ, բայց մտաւորական, քաղաքական, յեղափոխական մեծ փորձով, նոյնիսկ կիսով չափ կոտորուած հայ ազգային ղեկավարութիւնը աւելի պատրաստ, աւելի ատակ էր հիմը դնելու ազգային անկախ պետականութեան, քան 1991-ին երբ բթացել էր մեր ազատ մտածելու եւ առանց օտար տէրերի թելադրանքների որոշումներ կայացնելու, եւ մանաւանդ՝ ազգային շահերը անձնական շահերից վեր դասելու ունակութիւնը: Ինչ որ նոյնն էր մնացել, դա հայ ժողովրդի հատուածականութիւնն էր, որ առաջին հանրապետութեան օրօք դրսեւորուեց արեւելահայ-արեւմտահայ ճեղքուածութեամբ, իսկ երկրորդ հանրապետութեան օրօք՝ հայաստանահայ-սփիւռքահայ անհանդուրժողութեամբ:

---

33. Մէջբերուած է ՀՅԴ 9-րդ Ընդհանուր ժողովին Նիկոլ Աղբալեանի բացման խօսքից»: Տես «Յառաջ», Երեւան, 2, 4 հոկտեմբեր 1919, Ա. տարի, թիւ 10, 12:

Բանալի բառեր՝ զարթօնք, քաղաքական, պետական, ազգային անկախութիւն, ինքնավարութիւն, Թրքահայաստան, Ռուսահայաստան, ՀՅԴաշնակցութիւն, պետականաշինութիւն, ժողովրդավարութիւն

РЕЗЮМЕ

Рубина Пирумян

Доктор филологических наук

ПОСЛЕДНИЙ ПОЛЕТ АРМЯНСКОЙ ПОЛИТИЧЕСКОЙ МЫСЛИ, ПОПЫТКА ПЕРЕХОДА ОТ НАЦИОНАЛЬНОГО К ГОСУДАРСТВЕННОМУ МЫШЛЕНИЮ 1918-1920 гг.

Национально-политическое пробуждение армян в XIX веке стало отправной точкой для достижения политических целей, формирования Армянского вопроса и требований, возникающих в связи с этим в различных направлениях, стало идеологией, мирной и вооруженной освободительной борьбой.

Огромный прорыв в парадигма развития истории армянского народа произошел в годы Первой мировой войны, под завесой которой был осуществлен Геноцид армян. И в Османской, и в Царской империях произошли перевороты. В этот переломный момент представители армянской интеллигенции и политические деятели Западноармянского бюро и Национального совета попытались встать во главе руководства армянским народом,

Բանալի բառեր՝ *զարթօնք, քաղաքական, պետական, ազգային անկախութիւն, ինքնավարութիւն, Թրքահայաստան, Ռուսահայաստան, ՀՅԴաշնակցութիւն, պետականաշինութիւն, ժողովրդավարութիւն*

РЕЗЮМЕ

Рубина Пирумян

Доктор филологических наук

ПОСЛЕДНИЙ ПОЛЕТ АРМЯНСКОЙ ПОЛИТИЧЕСКОЙ МЫСЛИ, ПОПЫТКА ПЕРЕХОДА ОТ НАЦИОНАЛЬНОГО К ГОСУДАРСТВЕННОМУ МЫШЛЕНИЮ 1918-1920 гг.

Национально-политическое пробуждение армян в XIX веке стало отправной точкой для достижения политических целей, формирования Армянского вопроса и требований, возникающих в связи с этим в различных направлениях, стало идеологией, мирной и вооруженной освободительной борьбой.

Огромный прорыв в парадигма развития истории армянского народа произошел в годы Первой мировой войны, под завесой которой был осуществлен Геноцид армян. И в Османской, и в Царской империях произошли перевороты. В этот переломный момент представители армянской интеллигенции и политические деятели Западноармянского бюро и Национального совета попытались встать во главе руководства армянским народом,

преследуя цель добиться независимости Западной Армении и автономии Российской Армении. Это была первая попытка перехода от национально-политического мышления к государственному.

Независимость Грузии и роспуск Сейма стали неожиданностью, что проявилось в осторожном объявлении о независимости Армении. Тем не менее после первых неудач политическое руководство Армении воспользовалось этой возможностью, и произошел большой скачок в развитии армянской политической мысли в направлении независимой государственности. Брошенный вызов выявил полярные различия в подходах и действиях и привел к большому влиянию партии Дашнакцутюн на недолгую жизнь Республики Армения.

Началось построение государства. Это заключалось в служении интересам народа, создании национальной армии, определении и закреплении границ страны, ее роли и положении в большой мировой семье, в созднии независимой судебной системы, сети самоуправления, обеспечении возможности культурного творчества, развитии системы образования и языка. Сменявшие друг друга правительства пытались реализовать эти принципы демократического государства. В этом процессе были и достижения, и провалы. Существовало множество внутренних и внешних препятствий, самым губительным из которых было тайное соглашение между Турцией и большевистской Россией о вторжении на территорию Республики Армения, а также разрушительная деятельность армянских большевиков, изначально отвергавших независимость Армении.

Ключевые слова: *пробуждение, политическое мышление, государственное мышление, национальная независимость, автономия, Турецкая Армения, Российская Армения, Дашнакцутюн, построение государства, демократия.*

SUMMARY

Rubina Peroomian

Doctor of Middle Eastern Languages and Cultures

THE LAST EFFORT TO TRANSCEND THE LIMITS OF ARMENIAN POLITICAL THOUGHT AND THINK OF STATEHOOD, 1918-1920

The 19th century Armenian national and political awakening gave birth to political goals and demands which progressed in various directions, to become a creed to bring about the Armenian liberation movement peaceful and armed.

The Armenian Genocide under the cover of WWI caused a huge paradigm shift in Armenian history. Political upheavals shook the Ottoman and Russian empires. During these daunting times, Armenian intelligentsia and political activists tried to lead the Armenian life pursuing independence for Western Armenia and autonomy for Russian Armenia through the structures of Western-Armenian Bureau, The Armenian National Council, and the ruling circles of Transcaucasia. Their efforts were the first sparks to transcend the limits of political thought and to think of statehood.

The declaration of Georgian independence and the dissolution of Seim took Armenians by surprise, and that is well reflected in the cautious wording in the Armenian declaration of independence. After the initial confusion, Armenian lea-

ders grabbed the opportunity and that was the final upsurge in political thought toward independent statehood. The many existing challenges manifested polarities in approaches and tactics ensuing the powerful influence of Dashnaktsutiun (Armenian Revolutionary Federation) in the short life of the First Republic of Armenia.

The state building began serving the interests of the people, creating a national army, defining the borders of the republic and securing its place among the nations, creating an independent judicial system and a self-governing network, ensuring people's cultural creativity and the development of the educational system and language. These were the principal domains of democratic statehood the consecutive governments tried to achieve. There were successes and failures.

Many internal and external obstacles existed along the way, the deadliest of which was the secret agreements between Nationalist Turkey and Bolshevik Russia to run over the Republic of Armenia and the destructive conspiracy of Armenian Bolsheviks who from the beginning rejected the idea of Armenia's independence.

Keywords: *Renaissance, political thought, state thought, national independence, autonomy, Turkish Armenia, Russian Armenia, Armenian Revolutionary Federation, state building, democracy*